

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՍԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 39

1898 ԴԵԿՏԵՄԲԵՐ 19

Ամեն Տեղի համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26, իսկ եռամսեայ, 13 դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 Ֆրանկ: Թղթատարի ծախքը ամբողջութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բոսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի Տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

58րդ Տարեդարձ Ծննդեան Վեհ, Կայսեր Թուրքիոյ:

Ղ. ԲՈԼԱՏ.—Ճարտարարուեստական: Ներկարարութիւնը: Բամպակ:

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ.—Մեղուարուծական: Մեղուններու ծնունդը:

Ղ. ԲՈԼԱՏ.—Շերամարուծութիւնը Բասթճօռեան դրութիւնով. Մակարուծային փոխանցիկ հիւանդութիւններ:

Տ. ՊՕՉԱՃԵԱՆ.—Գիտական խնդիրներ:

Աղգային լուրեր:

Թղթակցութիւն, Հանելուկ, Ազդէ ԷՆ.

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՅՍԷՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Ալի Ճատտէսի, Թիւ 4

Վեց տառերով կազմուած՝
Որ տեղ տեղ կայ հաստատուած,
Կը հասկցուի իմաստէն
Երկու բան որ խիստ պէտք են:

Առջի վանկը որ «պատ» է՝
Պարտէզ և տուն կը պատէ,
Զայն շատ մարդիկ տեսած են՝
Երբ որմնադիրք կը հիւսեն:

«Գամ» կը կոչուի երկրորդը՝
Խիստ ալ շատ է տեսակը.
Կը գործածուի միմայն
Ոչ քարաշէն շինութեան:

Այս երկուքը միասին
Հըրաման մը կազմեցին.
Ա՛լ գըտայ քեզ անգամ մը,
Դու չե՞ս այն «պատգամ» բառը:
Միհրան Զ. Գարագաշեան

Բոլոր վանկով բառ մը չե՞ս դուն,
Նախ զատ ունիս իմաստ սիրուն.
Վանկդ առաջին երեք գրով,
Հիմա պիտի լուծեմ ես քեզ սիրով:

Առաջին վանկը «պատ» բառն է,
Որ ամէն վայր չըմպատէ.
Երկրորդ է «գամ» խիստ պիտանի,
Տունն փայտաշէն անով շնուի:

Երբ վանկերդ միացուցի՝
Տէրունական հրամանդ լսեցի.
Ա՛լ լուծեցի քեզ այս անգամ,
Դու չե՞ս այն բառն որ կոչուիս «պատգամ»:
Յակոբ Բապունճեան

Հ. Ս. Տէրվիշեանի ՀՆՏԵՒՐՈՊԱԿԱՆ
ՆԱԽԱԼԵԶՈՒԱՆՈՒՆ գրքինուԼԵԶՈՒ հան-
դէսին ամբողջական հաւաքածոյին պէտք
ունեցող բանասէրներն ու գրասէրները
կրնան խմբագրութեանս դիմել: Աւե-
լորդ է հոս առաջ բերել այդ երկու հե-
ղինակութեանց արժէքը. ամէն բանա-
սէրի ու գրահմուտի համար անհրաժեշտ
գործեր են:


Դիները խիստ դիւրամատչելի են.
փութացէ՛ք առիթէն օգտուել մինչև մէկ
ամիս, որովհետև օրինակները սպառած
են:

ՏԳԴ. Բ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ-ԿՆԱՆՏԱԲՈՅԺ, ՄԱՍՆԱԳԵՏ

ԶՂԱՅԻՆ ՀԻԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

Որ իր երկար փորձառութեամբ ծա-
նօթ է, մի քանի տարիէ ի վեր ուսում-
նասիրութիւններ կատարելէ ղկնի ի Բա-
րիդ, դարձած է մայրաքաղաքս, հաս-
տատելով իր բնակութիւնը Բերա Մէք-
թէպ-Պայրամ-Փողոց, Թիւ 29, ուր ամէն
օր կէս օրէ վերջ հիւանդ կ'ընդունի:
Մասնաւորապէս կ'դարմանէ կնոջական և
չղային ամէն հիւանդութիւններ: Ե՛ւ.
նոյն ժամուն ձրի կը դարմանէ կարօտ-
եալները: Ելեքտրաբուժում ամէն տե-
սակներովը, մասնաւոր քննութիւն Ռե-
օնթկէնեան մեքենայով:



58^{րդ} ՏԱՐԵԳԱՐՁ

Ծ Ն Ն Դ Ե Ա Ն

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՎԵՂ. ԿԱՅՍԵՐ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.Ի

Այսօր Թուրքիան համօրէն Հարսնետան մը պէս, պաշտօնական փառաց ու պառույ առարողական մեհ-ւանդներովն ու պճնիւքը բողբուած՝ իւր սիրեցեալ աննման Վեհապետին 58րդ Ծննդամեակը կը աօնէ ցըն-ծալիր, թէ՛ Նահանգաց և թէ՛ Մայրաքաղաքի մէջ, սկսեալ ոսկեձեղուն ապարանէն մինչև ց'հուսկ յարդ-եայ հիւղեակն հովուին. մինչև հոն՝ ուր ահեղաշուք կը

ծածանի Օսմանեան Վեհապանծ Մահիկն իւր յաւերժարփի Աստղերովը ճաճանչուն՝ ծովուց ու ցամաքաց վերայ, և մինչև հսն՝ ուր կը տարածուի Օսմանեան Վեհապետութեան թեւարկու Ամպհովանին, պահպանելով, պաշտպանելով իւր հզօր Աջոյն տակ, երեք հարիւր միլիոն իսլամներն ու միլիոնաւոր Բրիտոններէն, որք ամենեքին՝ այսօր՝ իբրեւ հասարակաց միւսնոյն Բարի ու Արի Հօր զաւակունք, սիրոյ նոյնեմի ցոյցերով, միութեան նոյն համերաշխ հոգւովը, երախտագիտութեան և շնորհակալութեան նոյն խանդավառ զգացմամբքն ու մտածմամբքն ողևորեալ, միաշունչ սւ սրտաբուխ սրբասացութեամբք կը գահաբանեն իրենց Միահեծան Տէրը՝ թէ՛ Աղօթատանց, թէ՛ Դպրատանց, թէ՛ Պաշտօնատանց մէջ։ չքեղազարդելով հասարակաց բոլոր շէնքերը՝ Օսմանեան յաղթապանծ դրօշներովն ու զինանշաններովը, լուսազարդելով հանդերձ հանրային բոլոր հաստատութիւնները՝ անձնիւրն իւր նախասիրած ճաշակովն և մի քան զմի գերազանց հանդիսանալու նախշուն ոճով մը։

Օսմանեան Սուլթանաց Ոստանը՝ Պալիսը՝ նամանաւանդ՝ այս օրինակ հանդիսութեանց մէջ՝ ինչպէս ամեն՝ նոյնպէսև այս տարի, պաշտօնական շուքի, ցոյցի, ձեւի և սեթեւեթի ճոխանքովն ու պերճանքովը կը գլէ սոյն աւուր տօնակատար բոլոր Օսմանաստանները։

Բաւ է սոյն տօնական օրը՝ այցելէ մէկը ցերեկին Շուկան, և, գիշերը՝ Պալիսն ու Բերան, նա առաւել Վոսփօրը, ուր վիթխարի զրահաւորէն սկսեալ մինչեւ ձկնորսին մակոյկը չքնազագեղ մէտէորաի մը պէս լուսազգեստ ու դրօշազարդ կը լողայ, կը խայտայ։ Մայրաքաղաքն համակ խնդումի, զբօսումի, նուագի, լուսի, խնջոյքի ու խրախճանքի ցուցահանդէս քաղաք մը կը հանդիսանայ իւր շլացած աչքերուն։

Ինչպէս օսմանեան միլիոնաւոր հպատակներն այսօր իրենց Վեհ, Կայսեր քարեքախդ Ծննդեան Նոր Տօնին առթիւ կը վերանորոգեն իրենց հաւատարմութեան ու շնորհաւորութեան բուն զգացումները, որոց հաւաքական ու պաշտօնական թարգմանը կը հանդիսանան նախարարք, Կուսակալք, Դեսպանք, Իշխանք, Կրօնական Գլուխք և Ազգապետք Իսլամ ու Բրիտանեայ Հասարակութեանց, նոյնպէս ո՛չ նուազ խանդավառութեամբ լի բերկրանօք կը փութացնեն և օտար Ազգաց Վեհապետք ու Վեհապետահիք, իրենց պաշտօնական սրտագին համակրանք առ Օսմանեան Վեհապետ՝ հեռագիր շնորհաւորականներով։

Վեհ. Սուլթան Համիտ Բ.ի Ծննդատօնին առթիւ յայտնուած սոյն տիեզերական խնդակցութիւն ու ըսքանչացում՝ անժխտելի գնահատումներ են Նորին Վե-

հափառութեան աշխարհաշէն գործերուն և քաղաքակրթիչ գերերուն, զորս իր համբաւատենչ թագաւորութեան ոսկեղէն թուականին մէջ կատարեց: Տարուէ տարի բաղմնադասկեցան կրթական, գիտական, առևտրական, արուեստային, ճարտարագործական հանրօգուտ Հաստատութիւնք: Ներմուծան վարչական բարեփոխումք կառավարական ամէն կարգի պաշտօնէութեանց մէջ. իր բաղմնագդի ժողովրդոց բարգաւաճումն ու զարգացումն աւելի զօրաւոր հիմերու վրայ հաստատուեցան: Երջանկութիւնն ու խաղաղութիւնն աւելի երաշխաւորիչ հանդիսացուց: Հեռագիրք և Երկաթուղիք Երկրին ամէն կողմերը աւելի ընդարձակում և ծառայում գտան՝ տիեզերական հաղորդակցութեան մէջ դրնելով նաև Թուրքիան: Թէ՛ ցամաքի, թէ՛ ծովու վրայ զինուորական ուժերը Եւրոպայի ամենէն աւելի զարգացեալ ազգերու ռճովը վերակազմուեցան:

Տօնելով ուրեմն Վեհ. Սուլթանին Ծննդատօնը, տօնած կը համարէնք Թուրքիոյ Վերածնութիւնը, որուն ինքն իսկ է մարմնացումն ու յղացումը, իր աշխարհաշէն հանճարով և իր կորովի կամքովը:

Սոյն տիեզերական խնդակցութեան՝ իրրև արձագանք ու թարգման կը հանդիսանայ նաև ՀԱՆՐԱՊԻՏԱԿ, ի դիմաց Մամլոյն, որուն հայազգի ու օտարազգի բոլոր ներկայացուցիչք շատ մը պերճախօս շեշտելով ու զիրար գերազանցող փայլուն ներբողականներով հանրային խնդակցութեան ու շնորհաւորութեան զեղուն զգացումներն արտայայտեցին առ Օգոստոսիառ Ինքնակալն Երկրին:

Հայ Ազգն այս տարի աւելի եռանդուն կերպով կը յայտնէ իր երախտագիտութիւն, իր գոհունակութիւնն առ իր Բարեխնամ Վեհ. Կայսրն, որ հաճեցաւ Ազգին Մեծ Տունին՝ Հիւանդանոցին՝ հացն ու միսը կրկնապատկել՝ կրկնապատկեալ եղկելեաց չուառութիւնը մխիթարելու համար:

Մաղթելով որ մեր Ինքնակալին Ծննդեան մէն մի նոր Տօնադարձ լինի ընդհ. երկրին՝ և նա մանաւանդ Հայոցս համար՝ նորանոր բարեաց ու շնորհաց նոր վերադարձ. կը ձայնարկենք ի խոր սրտէ մեր և Ազգին՝

ԿԵՅՅԷ՝ ԱՊԱ՝ ՄԵՐ ՎԵՀ. ԱՐԲԱՅ,

ԳԱՀՈՒՆ ՎԵՐԱՅ, ԱՆՍԱՍԱՆ ՄՆԱՅ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆԵՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԲԱՄՊԱԿ

3. ԴԵՂՆՈՐԱԿ ԲԱՄՊԱԿԵՆԻՆ (G. religiosum) կը մշակուի Ձինաստանի, Հնդկաստանի մէջ մասնաւորապէս, և կուտայ նանքինեան բամպակ կոչուած տեսակը, որ նշանաւոր է իր չէկ գոյնով:

4. ԾԱՌԱԿԵՐՊ ԲԱՄՊԱԿԵՆԻ (G. arboreum) — Ասիկա մշտական տունկ մ'է, և կը մշակուի Հնդկաստանի մէջ. բաւական աղէկ տեսակէ բամպակ մը կուտայ:

Կան տակաւին շատ տեսակներ, բայց որովհետեւ հոս մենք նպատակ ունինք միայն հակիրճ տեսութիւն մ'ընել, անցողակի գաղափար մը կազմելու համար բամպակի տեսակներուն վրայ, և գիտնալու համար թէ, սա կամ նա երկրի բամպակէն ոստայնուած կարգ մը կերպաները, որոնք նշանաւոր են իրենց գոյներով և փայլով, կը պարտին այս յատկութիւնները իրենց տեսակին, տեղւոյն կլիմային, միսիայն վերոյիշեալները ծանօթացնելով կը բաւականանանք:

ՅԻՋԻԲԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԱԾԻ ԲԱՄՊԱԿԻ. — Երբ մանրադիտակով դիտենք, բամպակի թելերը կը տեսնուին՝ պարուրաձև կերպով իրարու փաթտուած երկգնդերու տեսքով. և երբ թելի մը մէջտեղէն կտրենք և այնպէս նայինք մանրադիտակով, այն ատեն կը տեսնուին տափակցած խողովակի ձևով:

Բամպակի թելը, երկնցած և ճնշուած բուսային բճիճ մ'է իրապէս: Բայց երբեմն կը գտնուին լայն թելեր, ժապաւէնի տեսքով՝ և նշանակելի թափանցիկութեամբ: Երբ այս վերջինները մէջտեղերէն կտրելով մանրադիտակով գիտենք, միւսներուն պէս ունեն կեդրոնային խողովակ մը հետքը չի տեսնուիր ասոնց վրայ: Ս. յապիսիները բամպակի տհաս թելերն են, որոց մէջ բճճային չլծապատեցող բաժանումը տակաւին տեղի չէ ունեցած. և, հետեւաբար ալ, հասունցած թելերու պէս ներկ չեն առնիր (գիտնալով որ

ներկը կը թափանցէ բճիճներու խողովակներուն մէջ.) և տեղ տեղ ճերմակ բիծեր յառաջ կը բերեն այն կտաւներուն վրայ, որոց մէջ կը դտնուին, և ներկուած են տորոնով (garance քէօք պոյան) կամ լեզակով (չիվիտ):

ԲԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆ ԲԱՄՊԱԿԻ.

— Բամպակը կազմուած է պարզապէս բճճանիւթ կամ խորշանիւթ կոչուած դոյացութեան մը, և վեր ի վերոյ հարիւրին 5 աղտեղութիւն կը պարունակէ, որ հետեւեալներն են. բուսադոնդոդի թթու (acide peotique), թխորակ ներկատու նիւթ մը. բամպակի մեղրամոմ, ճարպային թթուներ, զոր օրինակ մարկարային թթու (acide margarique), և և սպիտակեղրայ նիւթեր: Ասոնց մէջէն ամէնէն շատը բուսադոնդոդի թթուն է: Այս աղտեղութիւններէն զատ, այնպէս կ'երևի որ չի գործուած բամպակի թելերը ծածկուած են տեսակ մը նրբին թաղանթով կամ լաւ ևս կեղեւով մը որ բճճանիւթ չէ: Բամպակը մանրադիտակով քննուած ատեն, եթէ պղնձի ջրօքսիտի անուշադրային լուծուածքով (solution ammoniacale d'hydrate d'oxyde de cuivre) թելի մը թրջուի, այս լուծուածքի ազդեցութեան տակ թելը կ'ուռի, մինչդեռ կեղեւը անփոփոխ կը մնայ, և տեղ տեղ խեղդածներ կը ձևացնէ անորոշ լայնութիւններով: Այդ ատեն երբ կաթիլ մը ծծմբային թթու աւելցուի, բճճանիւթը իսկոյն կը զատուի դոնդոդային զանդուածի (բէլթէյի պէս) մը ձևով, և եթէ կազմափոխութեան այս վիճակին մէջ կաթիլ մը մանիշի լուծուածք աւելցուի, կապոյտ գոյն մը կ'ատանայ, մինչդեռ կեղեւը դեղին կը ներկուի: Զի գործուած բամպակի միջին խոնաւութիւնը հարիւրին 8 է:

Նորշանիւթի քիմիական տարապն է $C_6 H_{10} O_5$. Իւր բաղադրութիւնով շատ կը կը մօտենայ օսլայի, աջարտուղի (dextrine), քաղցուենիտի (glucose): Անգոյն, անհամ եւ անհոտ է: Իր տեսակարար ծանրութիւնն է 1,5: Հալման կէտը 230 աստիճանէն վեր եթէ տաքցուի, թուի գոյն մը կ'ատանայ, և կ'սկսի բաղալուծուիլ: Օդի մէջ կայրի, առանց զօրաւոր հոտ մը տարածելու, և ասիկա իր բնորոշ յատկութիւններէն մին է, որով կ'որոշուի մետաքսէն և բուրդէն: Հասարակ լուծիչներու ազդեցութեան տակ անփոփոխ կը մնայ, բայց իսկոյն կը լուծուի անուշադրային պղնձի օքսիտի լուծուածքին մէջ:

(Շար.)

Ղ. ԲՈՂԱՏ

ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ

ՄԵՂԱԽՆԵՐՈՒ ԾՆՈՒՆԴՈՒ

(Հարսնական. ԳԻՏ 32)

Մեղունները կը բազմանան մայր-մեղուն ամած հաւկիթներով. ուրեմն մայր-մեղուն ամբողջ փեթակին հողին կը ներկայացնէ. յիւրաւի եթէ ու է պատճառաւ մայր-մեղուն կորսուի, ամբողջ փեթակին մեղունները անհանգիստ կ'ըլլան, կը յուսահատին ու խառնակութիւնը կ'սկսի. ալ կը կորսնցնեն խեղճ որբ մեղունները իրենց ժրջանութիւնը, աշխատութիւնը, ալ կը ըսուին տեղափոխուի. արտաքին բզկիւններ, կարծես ամէնքն ալ որսչափ են մեռնիլ, անօթի, ծարաւ: Եւ կարելի է այս տիւրք վիճակին վերջ տալ միմիայն մայր-մեղուն գտնալով կամ ուրիշ մայր մեղուն մը ընդունել տալով:

Մայր-մեղուն մէկ պաշտօն դնի, ա՛յն է հաւկիթ ամեւ ամբողջ կեանքին մէջ որ 4—5 տարի կը տևէ:

Մայր-մեղուն իր կեանքին մէջ մէկ անգամ կը բեղմնաւորի միակ արու մեղունէ մը: Զուգաւորութենէն 48 ժամ վերջ թագուհին կ'սկսի ձուել. կան հաւկիթներ որոնք յառաջ եկած են իրար արդիւնք զուգաւորութեան. ասոնք ծնունդ պիտի տան գործաւորուհի և մայր-մեղուններու: Բայց մեղունները ինչպէս նաեւ կարգ մը միջատներ կըրնան ձու ամեւ առանց զուգաւորման, սակայն մեղուններու այս կարգի հաւկիթները միմիայն արու մեղուններ կ'արտադրեն:

Մեղուններու հաւկիթները փոքր, երկայն և քիչ մը ձուածե են. երկայնութիւնը 2—3 հազարորդամեթր է և գոյներնին ճերմակ կամ հազիւ հազ դեղնագոյն:

Թագուհին կ'ածէ ընդհանրապէս մեղրախորիստին կեդրոնի բջիջներուն մէջ, իսկ եղբայրներու բջիջները պիտի ընդունին մեղրը և բեղմնափոշին:

Մայր-մեղուն ամեւէ տառաջ լաւ մը կը դիտէ որ իւրաքանչիւր բջիջ մօքուր ըլլայ. յետոյ իւրաքանչիւրին մէջ մէկ մէկ հաւկիթ կը զետեղէ. եթէ երբեք սխալմամբ մէկտեղ երկու հաւկիթ գտնուի միեւնոյն բջիջին մէջ, գործաւորուհիները չուտ մը մին կ'ուտեն:

Նոյնպէս գործաւորուհիներու, թագուհիներու և արուներու բջիջները իրարմէ քիչ ու շատ տարբեր են ու թագուհին իւրաքանչիւր բջիջի մէջ յարմար հաւկիթներ կը զետեղէ և նոյն իսկ եթէ սխալմամբ արու մեղուն մը բջիջին մէջ գործաւորուհիի հաւկիթ մը դնէ, չուտ մը գործաւորուհիները կ'ուղղեն:

Թագուհի կամ մայր-մեղուն յառաջ բերող հաւկիթը գործաւորուհիներու հաւկիթին յար և նման է. միայն առաջինին բջիջը տեղի մեծ է և երբ երեք օր վերջ հաւկիթէն կապտագոյն որդ մը դուրս ելլէ, միւսներէն շատ տարբեր և առատ կերակուր կ'առնէ և այս սնունդին ու մասնաւոր խնամքներու շնորհիւն է որ պիտի ըլլայ մայր-մեղուն:

Գործաւորուհիներու և արուներու հաւկիթներն ալ երեք օրէն կը ճաթին ու մէջէն աւազի մեծութեամբ որդ մը դուրս կ'իլլէ. յետոյ 5—6 օր դայեակները իւրաքանչիւր բջիջի մէջ կը դնեն մեղր ու բեղմնափոշի. որդերը այս սնունդը կը ծծեն ու հետզհետէ կը մեծնան. յետոյ դայեակները իւրաքանչիւր բջիջի բերանը ակամփամփէ կախալի մը կը շինեն, այս խուցին մէջ որդը կը կերպարանափոխուի. նախ իրենց վրայ մետաքսանման թելերով բոժոժ մը կը հիւսեն և մէջը «հարսնուկ» (nymphé) կը փոխուին երեք օր հանդարտ մնալէ վերջ և այս վիճակին մէջ՝ այսինքն իրար հարսնուկ կը մնան 7 օր:

Եթէ օր վերջ երբ կատարեալ մեղուն եղած է, նախ բոժոժը կը պատուէ ու յետոյ բջիջին կախալիքը ու դուրս կ'իլլէ, բայց իր խուցէն շատ ջի հեռանար, այլ մի քանի սանթիմետր տեղ երթալով դարձեալ կը վերադառնայ. յետոյ մի քիչ աւելի կը հեռանայ, դարձեալ կը վերադառնայ և այսպէս շարունակաբար մինչև որ իր խուցն ճանչնայ ու վարժուի:

Արդ, գործաւորուհիները շատ կը մաշին ու կը մեռնին գրեթէ օրը 300—400 հատ. այս նորերը անոնց տեղը կ'անցնին ու կ'սկսին աշխատիլ:

Հաւ մայր մեղուն մը մէկ տարուան մէջ 5—600000 հաւկիթ կ'ածէ: Երբ փեթակին մէջ մեղունները սկսին բազմանալ, հին թագուհին մեղուններուն մէկ մասով փեթակէն դուրս կ'ընէ և ընդհանրապէս ծառի մը ճիւղին վրայ իրարու վրայ կը կախուին: Եթէ

ուղենք, կրնանք կողովի մը մէջ ճիշդ թոթովել, բայց Զանալու է որ մայր-մեղուն ալ միասին ըլլայ ու այսպէս պիտի կրնանք կազմել երկրորդ փեթակ մը:

Եթէ փեթակի մը մէջ արուններն ալ բազմանան, գործաւորուհիները արուններու կոտորածը կ'սկսին ու անոնց մեծ մասը կը քարդեն ու կը մեղցնեն իրենց խայթոցներով:

ՄԵՂՈՒՆԵՐՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ. — Այժմ մեղունները կարծեմ լաւ մը ճանչցաք, բայց անոնց պատմութիւնը լմնցնելէ առաջ երկու խօսք ըսենք մեղուններու թշնամիներու մասին:

Իբր առաջին թշնամի՝ յիշենք կրծողներէն «տան մուկը» և «գաշտամուկը», որոնք կը Զանան փեթակին մէջ մտնել ամեն ինչ լափելու համար: Կարծես տան և խանութներու մէջ ըրած ֆլաստուն գոհ չեն, կ'երթան մեղրն ու մոմն ալ կորզել որ ամաղէտներու կողմէ չատ գնահատուած է: Բայց մեղունները՝ հաւ ստարիմ ծառաներ՝ լաւ ընդունելութիւն մը կ'ընեն իրենց խայթոցներով ու կը վանեն: Միայն ձմեռը երբ մեղունները ցուրտէն փեթակին մէկ անկիւնը կծկած են մուկերէն կրնան վախնալ. հոս ալ մեղուաբուծին պարտքն է չարիքին առաջքն առնուլ. առ այս փեթակին անցքին շուրջը պէտք է դնել թելերով շինուած վանդակ մը, որուն մէջէն մեղունները դիւրութեամբ կըրնան անցնիլ, բայց ո'չ մուկերը:

Միջատներուն մէջէն իրր թշնամի՝ կրնանք յիշել «իշամեղուն», «ձիապիծակ»ը (frelons), «չերեփագի»ները կամ «յաւերթահարա»ները և այլն, որոնք մեղուն թռած ժամանակ կը բռնեն. մասնաւորաբար իշամեղուն իր խայթոցովը կը կծէ ու իր ձագուկներուն կեր կուտայ:

Կրնայ ըլլալ որ թիթեռնիկներէն ոմանք հաւկիթ ածած ըլլան ծաղիկներուն վրայ ու մեղուն ալ ծաղիկներէն հիւթը քաղած եւ կամ բեղմնափոշին ժողուած ժամանակ, այդ հաւկիթն ալ միասին երթայ փեթակին մէջ. հոն հաւկիթէն թրթուր մը պիտի ենէ որ պիտի սնանի մեղրով կամ մոմով և աւելուրէն բջիջներէն մեծ մասը: Երբ մեղունները իմանան այս տեսակ թրթուրի մը գոյութիւնը, կը փնտռեն չուտ մը, կը գտնեն ու խայ-

թոցներով կը մեղցնեն, դիակն ալ փեթակէն դուրս կը հանեն:

Վերջապէս կան մեծ միջատներ ալ որոնք փեթակին մէջ կը մտնեն մեղր ուտելու համար, և որովհետեւ թռած թաղանթ մ'ունին, մեղուններու խայթոցներէն չեն փխտուիր: Բայց երբ մեղունները այս տեսակ միջատ մը նշմարեն փեթակին մօտերը, փեթակին անցքին մօտերը ականամոմով պատնէջներ կը շինեն, անցքը կը նեղցունեն, այնպէս որ՝ իրենք դիւրութեամբ կրնան անցնիլ, իսկ այս կարգի ֆլաստակար միջատները մեծ ըլլալով ինչպէս «մեռելի գլուխ» (lêve de mort) կոչուած թիթեռնիկը չեն կրնար փեթակին մէջ մտնել: Հոս ալ կրկին և կրկին անգամ ըլլալով կը նշմարուի մեղուններու խելացիութիւնը:

Արիւիւթ
(Երանայի)

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԴԵՌՈՒՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

ՀՆՏԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԱՆ
ԳԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆՈՎ

Պղպեղախա (Pèbrine, Գրաւ. Թապն)

(Երանայի-թէն Դէ-Թէ-37)

Մանրադիտական գերընտրութիւնով հընտարուծութեան դրութիւնը հետագայ սղլգրունքներուն վրայ հաստատուած է:

Ա.—Շերամի կծիծներ և թիթեռնիկներ կը գտնուին որ, բոլոր իրենց կեանքին մէջ գերծ մնացած են մարմնիկներէ, այսինքն՝ սղլպեղախաի հիւանդութենէն չեն վարակուած, մինչև իսկ հիւանդութիւնը ամենէն աւելի տարածուած վայրերու մէջ:

Բ.—Շերամատան մը ամբողջ շերամները մինչև իսկ, միեւնոյն տարուան մէջ վերայնշեալ «հրաշակերպ» բացառութիւնը կրնան կազմել:

Գ.—Մարմնիկներէ չի վարակուած թրթուրներէ յառաջ եկած թիթեռնիկներն, եր-

բեք մարմնիկներէ վարակուած հաւկիթներ չեն ածեր, և ոչ ալ այս հաւկիթներէն ելած թրթուրները վարակուած կ'ըլլան:

Դ.—Այդպիսի տուող զաւակիթներէ ելած թրթուրներու բերքը վտանգի տակ չ'ըլլար, որովհետեւ, անոնց մեծագոյն մասը մեռնելէ առաջ իրենց խողակը ոստայնած կ'ըլլան արդէն, և աննշան փոքրամասնութիւն մը միայն կը մեռնի խողակը չինելէ առաջ:

Պղպեղախտի վրայ մեր տուած ընդարձակ տեղեկութիւնները, առանց կասկածի կը հաստատեն վերոյիշեալ սկզբունքները. և եթէ աչքէ անցունենք անգամ մը պղպեղախտի և իւր տարածման վերաբերող յատկորոշ և գլխաւոր պարագաները, այն ստեն լաւ կը համոզուինք որ, եթէ մանրագիտական հետազոտութիւն կատարուի, վստահօրէն հիւանդութեան առաջքը կ'առնուի. և այս ճշմարտութիւնը այլեւս ու է բացատրութեան կամ ապացոյցի չի կարօտիր:

Բայց կը մնայ գիտնալ թէ, ինչպէս կատարելու է մանրագիտական հետազոտութիւնը:

Նախ՝ պէտք է գլխաւորաբար ամենէն աւելի յաջողած բուժարաններու շերամները հետազոտութեան սահմանել. որովհետեւ՝ բուժման ժամանակ, երբ ո՛ր է կերպով բուժարանի մը թրթուրները չարչրկուին, կամ ապտուղջ կացութեան մը մէջ գտնուին, նըպաստաւոր պայմաններու մէջ իրենց առողջութիւնը անվթար մնացած թրթուրներու չափ ընտիր արտադրիչներ յառաջ չեն բերեր:

Այսպէս՝ բուժարաններու ընտրութիւնը ընելէ վերջ՝ ճշդիւ նշանակելու է այն օրը՝ ուր թրթուրները կամ «պէօճէկ»ները՝ «մենծ ալատ»ի ատեն դէպի ցախերը (սէրկին) կ'ելլեն, և երբ խողակները կատարելապէս շինուած ըլլան, այսինքն՝ 5 կամ 6 օր ետքը, իւրաքանչիւր բուժարանէն՝ առանց զատելու, ըստ դիպաց կէս կամ մէկ քիօ խողակ առնելու է, և համրիչի մը պէս, կամ, ինչպէս կ'ընեն չոր թուզերը, ասեղով մը դերձանի վրայ շարելու է ուշադրութեամբ, այնպէս որ՝ մէջի կծիծը չի վնասուի: Մասնաւոր սենեակի մը մէջ, պատին երկայնքէն սաւան մը կը կախն վերէն վար, և այդ խողակի շարօցները կը կախն այդ սաւանին վրայէն: Սենեակը գի-

շեր ցերեկ 30էն 37 հարիւրարդի աստիճան տաք բռնելու է շարունակ, վառարանի մը միջոցով, որու վրան շայնկէկ ամանով մը ջուր դնելու է, կանոնաւոր խոնաւութիւն մը պահելու համար միշտ:

Այդ աստիճան սենեակը տաքցնելով՝ խողակներու մէջի թիթեռնիկները 4—5 օր առաջ դուրս կ'ելլեն՝ բուժարաններու վրայ գտնուածներէն, ուր բարեխառնութեան աստիճանը 17—20 հարիւրարդ (սանդիկուատ) է:

Այդ վեցերորդ օրը՝ քննութեան ենթարկելու է 20ի չափ կծիծներ, որոց մէջէն զատելու է աւելի էգերը, որոնք դիւրաւ կ'որոշուին արուններէն՝ իրենց ծանրութիւնով, այսինքն՝ միւսնոյն մեծութեամբ երկու խողակներ կշռելով, եթէ մին աւելի ծանր գայ, մէջի կծիծը էգ կ'ըլլայ: Եւ ինչպէս ըսած ենք մեր նախորդ դասին մէջ, մէկ երկու կաթիլ ջուրի մէջ կծիծը տորեղով, խիստ մեծ ուշադրութեամբ քննելու է. և ամենէն աւելի, տանձակերպ մարմնիկները և տժգոյն յօրէնիտները (organite) փնտռելու է՝ այս դեռատի կծիծներուն մէջ, և ոչ թէ փայլուն հաւկիթակերպները. որովհետեւ՝ ինչպէս ըսած ենք, կրնայ ըլլալ որ, հիւանդութենէն ուշ վարակուած կ'ըլլան թրթուրները, զոր օրինակ՝ Յրդ կամ Գրդ չրջանին մէջ կամ վերջերը, և կծիծին մէջ մարմնիկները հազիւ թէ տանձակերպ տեսակներու կամ տժգոյն յօրէնիտներու վիճակին հասած կ'ըլլան. և իրենց փայլուն հաւկիթակերպի ձևափոխութիւնն ալ, բնականաբար ժամանակ մը վերջը պիտի ստանան:

Այս մանրագիտական քննութիւնը պէտք է կատարել իւրաքանչիւր երկու օրը անգամ մը, այսինքն՝ ցախերը ելլելէն 6, 8, 10 օր ետքը:

Որովհետեւ իւրաքանչիւր քննութիւն 20 կծիծի վրայ պիտի կատարուի, եթէ այդ 20ին մէջ 2 կամ 3 կծիծ վարակուած ըլլան, ո՛ր բուժարանէն որ զատուած էին, անպատճառ առանց երկմտութեան, այդ բուժարանի խողակները ծախելու սահմանելու է: Որովհետեւ՝ քանի որ այդ ախտավարակ կծիծներէն յառաջ եկած թիթեռնիկներու ածած հաւկիթները, իրենց կատարելալ կաղնութենէն 10—12 օր առաջ մարմնիկներէ վարակուած կ'ըլլան, այսինքն՝ իրենց՝ ճուարաններու մէջ

կազմուելէն առաջ, հետեւեալ տարին՝ իրենց մէկ եւթ թիւերէն 100ին 40ը, 60ը և մինչև իսկ 80ը պղպեղախտէ վարակուած պիտի ըլլան, որով և այդ տարուան բերքն ալ գրեթէ ամբողջովին վտանգի տակ կ'ըլլայ:

Երբ մարմնիկները 14րդ կամ 16րդ օրը կ'սկսին երեւիլ, և այն ալ միմիայն մէկ քանի կծիծներու վրայ (միշտ վերոյիշեալ պայմաններով), այն ատեն այդ խոզակները առնուած բուժարանի բերքը հունտի կրնաք սահմանել, պայմանաւ սակայն որ, ատոնցմէ առնուած հունտերը նշանակուին՝ նախագրուած թեան համար:

Թիթեռնիկներու քննութիւնը կծիծներու քննութենէն աւելի դիւրին է. որովհետեւ՝ անոնց մէջ մարմնիկները աւելի մեծ քանակութեամբ կը գտնուին, և միշտ փայլուն հաւկթակերպ ձևով, որ աւելի դիւրութեամբ կ'որոշուին:

Թէ ինչպէ՞ս կը կատարուի թիթեռնիկներու մանրադիտական քննութիւնը, նախապէս բացատրած ենք արդէն: Պէտք է առնուազն 50 թիթեռնիկ քննել՝ իւրաքանչիւր անգամ, և աւելի՝ եթէ քննուածներուն մէջ նշանակութեան արժանի թուով մարմնիկներ գտնուին: Մարմնիկներու շատութիւնը նկատողութեան առնելու է, և ամէն անգամ մանրադիտակի դիտաւայրի մէջ երեքսունքը հաշուելով նշանակելու է. այս մասին ալ պէտք եղած տեղեկութիւնները տուած ենք արդէն:

Եթէ 100ին 10էն պակաս ախտավարակ թիթեռնիկներ գտնուին տեղական ցեղերուն մէջ, այն ատեն այդ բուժարանի ամբողջ խոզակները հունտի կրնան սահմանուիլ: Բայց խոզակները բացուած ատեն, ուշադրութիւն ընելու է որ, անոնցմէ դուրս ելած թիթեռնիկներուն մէջ եթէ տկար, վտիտ և առողջութիւննին խանգարուածներ գտնուին, միւսներուն հետ չի խառնուին. զոր օրինակ, տձև կազմակերպուածները, կամ անոնք՝ որոց աղուամագերը՝ մինչև իսկ շատ պզտիկ տեղի մը վրայ սև թաշակերպ կ'երևին, ինչ որ մարմնիկներու ներկայութեան մէկ յատկորոշ նշանն է: Միայն թէ՝ այս պարագային մէջ պէտք չէ չփոթել, մանաւանդ արուներու աղուամագին մէջ երեքսունք գորշ գոյնը վերոյիշեալ սեւին հետ, որովհետեւ՝ ընդհակառակը՝ այդ գորշ գոյնը առողջ

շութեան նշանն է: Հետեւաբար՝ այդ սև ու թաշակն աղուամագով և տկար կազմուածքով տեսնուած թիթեռնիկները պէտք է խուսյն ոչնչացնել առանց բացառութեան:

Հարկը թիթեռնիկներու մէջէն եթէ 10 հատէն պակաս մարմնիկներէ վարակուածներ գտնուին, գրեթէ մարմնիկներէ զերծ հունտ մը կ'արտադրեն: Իսկ եթէ հարկերին 10 վարակուած թիթեռնիկներ գտնուին, իրենց արտադրած հաւկթիկները 100ին առաւաւելն 2 մարմնիկաւոր կ'ըլլան:

Այս դրութեան ընտրելիութիւնը արդէն հաստատուած ըլլալով, այլևս ուրիշ առարկութիւն չի վերցնիր: Մ. Պէլլով, Միլանի Ակադէմիան ներկայացուցած իր մէկ տեղեկագրով, այս մասին երկար տեսութիւն մը կ'ընէ՝ ուրկէ կը քաղենք հետեւեալները:

1. Երամի հունտ պատրաստելու դրութիւնը զոր կը յանձնարարէ Մ. Բասթէօն, և որ կը կայանայ այդ նպատակին սահմանել միմիայն մանրադիտակի քննութեամբ մարմնիկներէ զերծ ըլլալին տպահովուած թիթեռնիկներու հաւկթիկները, միակ դրութիւնն է որ կարող պիտի ըլլայ փրկել մեր տեղական (Իտալիոյ) դեղին խոզակով շերամի ցեղը, և աւելի՝ շերամաբուծութիւնը պիտի բերէ հասցնէ այն զարգացած և բարգաւաճ վիճակին, ուր կը գտնուէր ներկայ հիւանդութեան երեւումէն և տարածումէն առաջ:

2. Հունտի արտադրութեան նպատակաւ եղած տաճումները (պէսլէմէք) պէտք է կատարուին քիչ քանակութեան վրայ, և իւրաքանչիւր շերամաբուծ՝ իր պէտքէն քիչ աւելի քանակութեամբ հունտ հասցնելու չափ տաճում ընելու է: Նոյնպէս՝ այս տաճումները պէտք է կատարուին նաև, կարելի եղածին չափ ընդհանուր տաճումներու շրջանակէն հեռի և չեղքացած. և անոնց սրնդեան սահմանելու է այն թիթեռնիկներու տերեւները, որոնք՝ իրենց տեղոյն և դիրքին շնորհիւ, շերամաբուծներու փոշիներէն ապակաւուելու վախ չունին:

3. Որովհետեւ ամէն տեղ թիթեռնիկներու և շերամատան չեղքացման հարկեցուցիչ պայմանները գործադրել դժուար և երբեմն իսկ անհնար է, այս առթիւ, նպատակին ուղղակի հասնելու համար, արտադրութեան

սահմանուած չերամներու տաժումը պէտք է սկսիլ կանուխէն, և աճապարիկ որ, չըջակայ բոլոր միւս շերամատուներու թրթուրներէն առաջ ոստերը ելլան, և իրենց խողակը կապեն:

4. Արդի վարակման ստոյգ պատճառը միմիայն շերամին մէջ աշխատեալ տարրի մը նիւթական փոխանցումը—հաւկթակերպ մարմնիկին—ապրացուցուած և հաստատուած ըլլալուն համար, այլևս՝ շերամի ցեղին իբր թէ բնական բերմամբ աշխատեալու և վատթարանալու մասին եղած ամէն անստոյգ ենթադրութիւն չի կոսկածոտ գաղափարներ մէկ կողմ թողելու է խալառ. և աւելի ջանալու է պատճառը մէջտեղէն վերցնել, որպէս զի ցաւալի հետեւութիւնն ալ ինքնին անհետանայ:

5. Տաժման տեղութեան մէջ, փորձառութեան կամ խնամքի պակասութեան պատճառաւ հասոյթը մասամբ կամ ամբողջովին կրնայ փճանալ. բայց ասկէ երբեք տիրող հիւանդութիւնը յառաջ չի գար, եթէ հաւնաբերուն կամ շերամատան մէջ անոր սերմը նախադոյութիւն չունենայ, և կամ դուրսէն ներմուծուած չըլլայ ու է միջոցով:

6. Որովհետեւ արու թրթուրիկին վարակումը ու է աղբեցութիւն չունենար հաւկիթներուն վրայ, մանրադիտական քննութիւնները պէտք է կատարել միայն էգ կրծիծներու և թրթուրիկներու վրայ:

7. Արդէն վարակուած միւսնոյն և մէկ անհատին մէջ հիւանդութեան տարածումը շարունակական ձեւ մ'ունի անպատճառ. թրթուրիկներու քննութիւնն ալ, աւելի դիւրին կ'ըլլայ, իրենց բնական մահէն վերջ ամէն տանն. մինչեւ աշնան և ձմրան մէջ: Եւն. եւլն:

Մանրադիտական քննութեանց վերաբերեալ մեր տուած տեղեկութեանց մէջ յայտնապէս կ'երեւի արդէն որ, միւսնոյն նպատակաւ յանձնարարած է միայն էգերը ուսումնասիրել, քննել, բանի որ հաւկիթներու մարմնիկներէ վարակման մասին ու է դեր մը չեն կատարեր, եւ ոչ ալ ու է կերպով աղբեցութիւն մը կրնան բանեցնել: Սակայն և այնպէս, այս արտադային մէջ ալ նկատողութեան առնելու խիստ կարեւոր կէտ մը կայ: Շատ հաւանական է որ, առողջ էգե-

րու՝ բայց քիչ թէ շատ մարմնիկներէ վարակուած արուներու միացումով, հետզհետէ շերամի ցեղը տկարանայ եւ վատթարանայ տարբեր ուղղութեան մը մէջ, որովհետեւ սա յայտնի ճշմարտութիւն մ'է որ, վատառողջ արտադրողներէ առողջ սերնդաւորում չի սպասուիր: Ասոր պէս ալ, ամէն տարի շտապի զուգաւորութեան համար անտաժարակ արուներ գործածելով, հետզհետէ շերամի սերունդը կը տկարանայ՝ ինչպէս վերը ըսինք:

(Շար.)

Ղ. ԲՈՒՏ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՐՆ

Ի ԳԱՍԸՄ-ՓՈՇՍ.

Շարաթ երեկոյ առաջնորդութեամբ Գասըմ-Փաշաի թաղ. Խորհրդոյ Դիւանին, Ս. Պատրիարք Հայրն առաջնորդուեցաւ Գասըմ-Փաշաի Ս. Զակոր եկեղեցին, ընկերակցութեամբ Գեր. Տ. Գնէլ Ծ. վրդ. Գալէմբեարեանի և Մայր-Եկեղեցւոյ Տ. Ղեւոնդ քահանայի:

Հիւրընկալուեցաւ թաղ. Խորհրդոյ անդամներէն Մեծ. Կարապետ էֆէնտի Մամասեանի տունը, ուր գիշերեց:

Առաւօտուն երկուեւ բարեպաշտից խումն բաղմութիւն մը ներկայ էր: Ն. Արքայնութիւնը հանդիտաւոր Ս. Պատուրազ մատոյց, որու կ'սպասուորէին Տ. Գրիգոր Ծ. վրդ. Աբարդեան, Տ. Գնէլ Ծ. վրդ. Գալէմբեարեան, Տ. Վրդանէս վրդ. Գալէմբեարեան, Տ. Ղեւոնդ քահանայ, և երաժշտ դպիւրներ: Ս. Պատրիարք Հայրը պարագային յորմար մէկ ժամէն աւելի պերճախօս քայրող մը արտասանեց, բացատրելով Հաւատոյ զօրութիւնը, զոր ունեցան սրանչեղագործ

Հայրապետք, նիկողայոսներ, Գրիգորներ, Միւռոններ եւ Յակոբներ. կարի գեղեցիկ կերպով շեշտեց թէ՛ ինչպէս պէտք է հաւատքն իրագործել, թէ՛ ինչպէս պիտի ունենանք զայն, եւ թէ՛ ինչպէս պէտք է սպասենք անկէ իբր արդիւնք: Բարեմաղթութիւններ ըրաւ Ազգ. բարերարաց եւ մասնաւորապէս՝ Նորատունկեան գերդաստանի բոլոր անդամաց համար:

Տէր ողորմիտի ատեն կարգացուեցաւ մտաաղի նուիրատուներու ցուցակը: Ս. Պատրարգէն վերջ Հոգեհանգիստ կատարուեցաւ վասն հոգւոյ Յակոբ էֆ. Նորատունկեանի, որու արժանայիշատակ թոռներէն Նորատունկեան Միքայէլ էֆ. ներկայ էր:

Ս. Յակոբայ մատուցող տւանդական խաչահանգիստը կատարուեցաւ, եւ ժողովուրդի ցրուած պահուն, մատաղաբաշխութեան արարողութիւնն սկսաւ եկեղեցւոյ դրան առջեւ. ժամարար Սըրբաղանը թաղին Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ քիչ մը հանգիստ առնելէն վերջը հրաւիրուեցաւ կրկին Մամասեան կարապետ էֆ.ի տունը, ուր ի պատիւ Ն. Ամենապատուութեան ճոխ սեղան մը տրուեցաւ, որոյ մասնակցեցան բոլոր եկեղեցական դասն եւ մասնաւոր հրաւիրեալք: Սեղանին վրայ թերթիս Տընօրէն-խմբագրապետի կողմէ հետեւեալ բաժակաճառը արտաստուեցաւ:

Ամենապատու Ս. Հայր:

Գասրմ-Բաշայի Հոյոյ անխառնակ թաղը՝ որ աշխարհագրօրէն եւ պատմաբանօրէն հռչակաւոր Ոսկեղջեր մէկ մասը կը կազմէ, իւր համեստ անջքութեան Դուք այսօր բոլոր Պատրիարքաց մէջ՝ առաջինն եղած էք, Յակոբ պատրիարքէն վերջ՝ որ Ս. Եկեղեցւոյս Յծման արարողութիւն կատարած է, որ երկրորդ անգամ ըլլալով, Ձեր նշանակալիւր եւ ներշնչուն ներկայութեամբ, նոր ու փայլուն շուք մը տալ հաճած էք: Այս Գասրմ-Փաշա հայաթաղը՝ հակառակ իւր սերկենի կամար-

դի անշուք եւ անցեալ կացութեան, ունեցած է իր նշանակելի օրերը, յորում չեմք սեր շողողած, այլ գէթ փալիւրած է՝ վաշելով իր երբեմնի ու սյօմէնի հոյակապ Հայոց մէջէն ականաւոր ամիրաներու եւ իրենց ազնուազարմ շառաւիղներու ներկայութիւնը: Եւ անոնց ազդեցիկ պաշտպանութիւնը: Սա վարկենիս՝ որ յանուն Գասրմ-Փաշացւոյ կը խօսիմ, չեմ կրնար մոռնալ անցեալ բարեյիշատակ Տօնիկ եւ Միաբ ամիրաներու անունները, որոնք հիմնադիրները եղած են մեր Եկեղեցւոյն, եւ միեւնոյն իրաւունքով կը յիշեմ նաեւ Նորատունկեան Նահապետական Գերդաստանի Արմին՝ բարեյիշատակ Վսեմ. Յակոբ էֆ.ի անունը, որ իր բարեպաշտական եւ ազգասիրական պաշտօններով ծանօթ եկեղեցւոյ շինութեան շարունակութիւնը կ'ստանձնէ՝ ժամանակակից երջանկայիշատակ Յակոբ Պատրիարքի խորհրդով եւ աջակցութեամբ, եւ աննկուն կամքով կը յաջողի աւարտած ըլլալու փառքն ու պատիւը իւրել:

Յորմէ հետէ Գասրմ-Փաշա գրգռւածն հանդիսացած է նաեւ պարբերաբար, Թորոս Գիսակ պէյերու, Սաշիկ Սարաճներու պէս կարգ մը նշանաւոր անձնաւորութեանց, որոնք ոչ միայն իրենց ներկայութեամբ պատիւ բերած են Գասրմ-Փաշայի հայաթաղին, այլ եւ իրենց ազգասիրական խանդով, գործունէութիւնով, դիրքով ու ազդեցութիւնով յիշատակութեան արժանի բարեպաշտութեան մը մէջ պահած են թաղը: Ներկայ Գասրմ-Փաշացին ալ ռակայն անարժան չէ իր անցեալ հայ Գասրմ-Փաշացիին, որու մինակ մխիթարական փառքը՝ Մայրաքաղաքիս բոլոր հայ թաղերու մէջ քան զամենեւին լքեալ եւ աննշան լինելուն հակառակ՝ Ձեզ նման Ազգասէր եւ Տիրասէր Պատրիարքի մը եւ Ձեր Սրբազնութեան աջակից ու հետեւորդ վեհօգի Անձանց ներկայութեան պատուոյն ու քաջակերութեան արժանանալն է:

Ներկայ Պատուարժան Թաղ. Սորհուրդն ալ, ոչ նուազ թաղեցոյ յարգանաց եւ երախտագիտութեան արժանի է, այսպիսի տնտեսական տագնապալի պայքարին մէջ՝ լրիկ մնջիկ գործելով, խոհեմութեամբ եւ իմաստութեամբ վարելով զիւր պաշտօն, առանց տեղի տալու թաղային աղտոտ եւ ան-

հաճոյ անպատեհութեանց :

Իսկ մենք, Սրբազան Հայր, Ձեր հոգեւոր գաւազնը, ոչ միայն իբրեւ Գաւազն-Փաշայի հայրդի, եւ ոչ միայն իբր թաղ. Խորհրդոյ անդամակից, այլ եւ իբր Ազգ. մամուլին խոնարհ՝ այլ յամառ ներկայացուցիչներէն մին, յԱնձին Ձերդ Սրբազնութեան, ոչ միայն կը յայտնեմք մեր խորին երախտագիտութիւնն եւ խանդավառ շնորհակալութիւնը, այլ նաեւ մեր մասնաւոր թէ ընդհանուր սքանչացումը, Ազգ. զարթութեան եւ հայ եկեղեցականութեան բարգաւաճման ի նպաստ ընծայած Ձեզ յատուկ այդ թանկագին ծառայութեանց նկատմամբ, զորս մատուցիք յօրէ անտի, երբ իբրեւ պերճախօս բեմբասաց՝ ներկայացաք մեր տաճարի ամպլոնին վրայ, տալով նմոյշն Մասիյօններու, Պօսիկներու, Ֆէնըօններու, երբ իբրեւ իմաստասէր եւ բանաստեղծ գրողէ՛տ՝ հայ մամուլին ընծայարեցիք Ձեր տաղանդավոր խորհրդածութեանց ներհուն եւ ներդաշնակ գրութեանքներ, երբ՝ իբրեւ Առաջնորդ քան զամենեւին՝ Ձեր նմանաց, տիպար կենցաղագիտութեան մը հանճարը փայլեցուցիք, իբրեւ վանահայր Հայոց Չարիսափանին՝ նուիրեցիք Հայ դպրութեանց ոսկեղինիկ Դարուն ստեղծագործ զոյգ մը Հայ-բաղկատաց վայել նախանձախնդրութեամբ թարգմանչաց արժանի հետեւորդներ, որք այսօր՝ իբրեւ առաջնորդներու առաջնորդ՝ տիպար Հովուութեամբ մը կը վսեմացնեն իրենց հոյակապ վարպետին արժանիքն, երբ՝ վերջապէս, իբրեւ Պատրիարք անվեհեր ոգով եւ փայլուն կերպով ապացուցիք թէ՛ ոչ միայն գրական, բանաստեղծական, իմաստասիրական եւ կրօնական Մարդն էք, այլ եւ գերազանցօրէն պաշտօնիդ հանճարեղ եւ խոհեմ վարիչն էք. ինչ որ առանց պերճախօս փաստերու, վաւերացուցին արդէն Ձեր յաւերժացեալ մշտախօս գործերն. քանի որ այսօր կարօտեցիք ի նախատ, պաշտօնական եւ անպաշտօն բարերար Մարմիններ ճարեցիք ու ճարճրկեցիք, վայելելով հանդերձ մեր Բարեխնամ, Հայրախնամ Ինքնակալին՝ Սուլթան Համիտ Բ. ի, համակրանքն ու համաբուծումն :

Իսկ մենք՝ Ս. Հայր, իբրեւ խոնարհ խաբարապետ Հանրագիտակին, որ շուրջ տարիէ մ'ի վեր, անձիս, ընտանեացս եւ ինձ

նման շատերու օգտակար ու հասութեամբ փայտեալ մասնագիտութեանս վերաբերեալ բոլոր պաշտօններս թողլով, յարած ու կառնած եմ միմիայն խմբագրութեանս անձուկ ու ցամաք պաշտօնին, թէ եւ ըստ կարի՝ ժողովուրդի տմեն դաստիարակի քաջալերութիւնն ու աջակցութիւնն վայելելէ զատ, ի մասնաւորի եւ ծանօթ բարերար անձնուարթութեանց պաշտպանութիւնն ալ վայելելու բախտն ունեցած է :

Այսօր շեշտելով կը շնորհաւորեմ սրբապետին խնդակցութեամբ Ձեր պաշտօնական գարուստն հոս, եւ կը սիրեմ ու կը հաւատամ յԱնձին Ձերդ Սրբազնութեան գլուխէլ Մամուլ եւ Տպագրութեանց այն մեծահոգի եղական Մարդը, որ՝ իբրեւ Մեկինսօս եւ Մենսօր պիտի հանդիսանաք հանրօգուտ մեր խոնարհ ձեռնարկին :

Մաղթելով որ այն բաժակ Յիսուսի շրթամբն՝ եւ այսօրուան Ձեզ նման Պատրիարք Սրբազան Պատարագչի մը օրհնութեամբ նւիրագործուած լինի, կը պարպեմ զայն յառաջ եւ յարեւաշատութիւն մեր վեհ. Ինքնակալին, եւ կը փաքաքիմ որ Ձեր սրբազան Օրհնութեան եւ ներկայութեան արժանի հանդիսացնէք միշտ մեր թաղ, եւ Ձեր Ս. Շուքով շքաւորէք զայն գէթ տարին անգամ մը, այս Սքանչեւագործ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին խորհրդաւոր օրը :

Կեցցէ՛ մեր վեհ. Սուլթանը. Կեցցէ՛ մեր Ս. Պատրիարքը : Անոնց հետ ապրի՛ն թաղիս եկեղեցւոյն եւ թաղեցւոցս բոլոր անցեալ, ներկայ ու ապագայ բարերարք եւ պաշտպանք :

Ս. Հայրը վարժարանի աշակերտներուն շաքար բաշխել տուաւ իր աւանդական բարի սովորութեանը համեմատ, եւ միանգամայն դպրոցին եւ եկեղեցիին մասնաւոր նուէրներ ըրաւ :

Կը խնդրուի մեր Պատ. Գործակալութիւններէն եւ Յարգոյ Բաժանորդներէն, որ բարեհաճին նոր Տարիէն առաջ յիտնեալ բաժնեգինները ղրկել : Այս առթիւ կը յիշեցնենք նաեւ մէկ քանի բաժանորդաց այն խոստումները, զորս ըրած էին նամակով, քիչ օրէն իրենց բաժնեգինը ղրկելու մասին :

ՀԱՆԴԻՍԱԻՈՐ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ
ՏԿՆ. ԵՐՄՈՆԷ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ

Գալֆաեան Որբանոցի բարերարուհի-
ներէն (*) Ազնուաւայլ Տիկին Երմոնէ Գա-
րակէօզեան՝ երեքշաբթի օրը առ Աստուած
փոխեցաւ: Չորեքշաբթի օրն հանդիսաւոր
կերպիւ Յուդարկաւորութեան և Թաղման ա-
րարողութիւնը կատարուեցաւ ի Բերա, Ս.
Երրորդութիւնը եկեղեցւոյ մէջ, ի ներկայու-
թեան խումն բազմութեան ազգային ու օ-
տարազգի «հայ-լայֆ»ին:

Առաւօտուն՝ յատկապէս Ս. Պատարագ
մատոյց Ս. Երուսաղիմայ Պատր. Փոխանորդ
Գեր. Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան, և Հոգե-
հանգստեան պաշտօն կատարուեցաւ Բերայի
Դպրոց դասուն երգեցողութեամբ:

Ժամը Յին սկսաւ Տան-կարգը և եկեղե-

(*) Եւ արդէն Գալֆաեան Որբանոցին
զգօն ու գործօն Տեսչուհին իսկ արցուն-
քով պատմեց՝ թէ Հանգուցեալը յաճախ
կ'ըսէր որ՝ «օր մը անպատճառ ամբողջ
Որբանոցը վերանորոգել և կարգ մը կալ-
ուածներ անոր յատկացնել ուխտած եմ՝
Խզճիս և Աստուծոյս առջև՝ շնորհիւ Վեհ.
Կայսեր՝ ու սեռիս ինձ նման մտածակից Բա-
րերարուհեաց ու Աստուածապաշտուհեաց ջա-
նիւք՝ յետ մահուանս՝ Աստուծոյ արդարոց
արժանի օրհնութեամբ լի և ամենուտեք
անխճճելի յիշատակ մը Ազգին ամեն ա-
ռենի և աստիճանի տիրասէր ու ցեղասէր
խնամակարօտորարուհեաց սրտին մէջ մըշ-
տնջենաւորելու համար:» Ո՛հ, Ուրբանոցս մեծ
բարերարուհի մը կորոյս, երբ գրպանիս ու
գանձանակիս վերջին լուման հատնէր, առ-
միջապէս կը վազէի իրեն, որպէս զաւակ՝ առ
իւր ծնողք, և որ՝ զիս մխիթարելէ յե-
տոյ՝ լիաբուռն դրամով կը վերադարձնէր
Որբուհեաց քով: Տիկին Երմոնէ Աւետարա-
նին պատուիրածին պէս՝ չէր ուզեր որ Աջն
խմանայ Ահեկին տուածը:» Գալֆաեան Որ-
բանոցի մեղուաջան Մայրապետին արցունքն
արդէն բաժնած են Տիկին Երմոնէի բոլոր
ծանօթ ազգայինք, սակայն միութարուելու
են լսելով որ Հանգուցեալ Բարեպաշտուհին

ցական մեռելական արարողութիւնը, որուն
կը նախագահէր Ամեն. Տ. Մաղաքիա Ս.
Պատրիարքը, շուրջն ունենալով Բարձր. Տ.
Բարթողիմէոս Արքեպիսկոպոս Չամչեան, Գեր.
Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան, Գեր. Տ. Գալ-
լիէլ Եպիսկ. Ճէվանիրճեան, Գեր. Տ. Ներ-
սէս Եպիսկ. Ասլանեան, և Արժ. Պաղճեան Տ.
Բարթողիմէոս, Վանքեան Տ. Արիստակէս,
Արարթեան Տ. Գրիգոր, Գալէմբեարեան Տ.
Գնէլ, Գալըսճեան Տ. Վրդանէս և Շահլա-
եան Տ. Վահրիճ վարդապետները, և Բերայի
բոլոր քահանայից վասն ու մայրաքաղաքիս
գլխաւոր եկեղեցեաց քահանաներէն շատե-
րը:

Թաւապատ և արծաթակուռ դադարը՝
եկեղեցւոյ մէջտեղը դրուած էր՝ բազմաթիւ
ծաղկեխաչերով ու ծաղկեփառներով զար-
դարուած:

Դադարին ծաղկերը բռնած էին Վսեմ.
Մամիկոնեան Միքայէլ Էֆ., Խալեան Գրի-
գոր Էֆ., Կիւմիւշկէրտան Գրիգոր Էֆ., Թո-
գատեան Տիգրան Էֆ., Թահթապուռն Ազա-
թան Էֆ., և Պոյաճեան Յակոբ Էֆ.:

Իսկ կերանակիրներն էին՝ Հրանտ Աստ-
ատուր Էֆ., Ֆնաբգլեան Արտաշէս Էֆ., Է-
ռայեան Վահան Էֆ., Աստուածատուրեան
Գառնիկ Էֆ., Սէլիմյէճեան Գրիգոր Էֆ. և
Յովակիմեան Գառնիկ Էֆ.:

Դադարին մօտիկ կեցած էին Գալֆաեան
Որբանոցի սանուհիները՝ առաջնորդութեամբ
Յովհաննէսեան Երանուհի մայրապետին:

Գարակէօզեան գերդաստանի զրեթէ բո-
լոր անդամները ներկայ էին և ճախակողմ-
եան դասին մէջ յոտնկայս ու տիրապետ
կը կենային. իսկ Գարակէօզեան գերդաս-
տանի նահապետը՝ Ազնուաշուք Գրիգոր Էֆ.

բոլոր իր ազգակցաց և բարեկամաց յաւերժա-
կան սիրոյն, օրհնութեան ու երախտեաց
արժանի ու բարիքն ինքնայորդար իրագոր-
ծած և անոր հուն հանուում յանձնարարած է
իւր մեծանուն և բարեպաշտ ժառանգու-
թաց: Արդարեւ Տիկին Երմոնէ ոչ միայն ամ-
բողջ Ազգին պատիւն աւերցնող առաջնա-
կարգ բարերարուհիներէն էր, այլ նաեւ իր
սեռին ազգային գրական գործացմանն ալ
յոյժ փափաքող ու նախանձախնդիր էր:

Մ. ԽՄԲ.

Գարակէօզեան՝ աշակողմեան դասին ետին կանգնած էր թախծեալ ու ախրագին դիմաք, շրջապատեալ վսեմ. նուրեան էֆ.էն, վսեմ. Ունճեան Արիկ էֆ.էն ու բազմաթիւ բարեկամներէն:

Յուզարկաւորական արարողութեանց առաջին Ազօթքը կարգաց Ս. Պատրիարքը: Երկրորդը Տ. Բարթողիմէոս Արքեպիսկոպոսը, իսկ երրորդը՝ Տ. Գէորգ Սրբազան:

Երկու Աւետարաններն ալ եղբերգական շեշտերով ընթերցան Տ. Գաբրիէլ և Տ. Ներսէս եպիսկոպոսները:

Արարողութիւններէն յետոյ, դազալը հանդիսաւոր թափօրով Եկեղեցւոյ Աւագ դռանէն դուրս հանուեցաւ ու բակէն անցնելով՝ պահարանի քովի դռնէն քառաձի մահալաք մը դուրսեցաւ, որու հետեւան 50ի չափ յուզարկաւորաց կառքեր՝ մինչև ի Շիշլի, ուր Տ. Արիստակէս Մ. Վարդապետ վանքեան և Տ. Գրիգոր Մ. Վարդապետ Աբարթեան և 7—8 քահանայք՝ թաղմանական արարողութիւնները սրտաշարժ կերպով կատարելով, հանգուցելուն մարմինը ամփոփեցին Գարակէօզեանց Գերդաստանին յատկացեալ Դամարարանին մէջ:

Ապա, ներկայք՝ իրենց խորին ցաւակցութիւնը արտայայտեցին Գարակէօզեան Գրիգոր էֆէնտիի և Գարակէօզեան գերդաստանի միւս անդամաց:

Հանգուցելոյն դադարին ծաղկեպսակներ ու ծաղիկաշեր նուիրած էին ի մէջ այլոց հետեւեալք՝

1. Գրիգոր էֆ. Գարակէօզեան:
2. Տիկին Վասիլուհի Գարակէօզեան և Որդիք:
3. Յովհաննէս էֆ. Գարակէօզեան:
4. Տիկին Սրբուհի Կ. Գարակէօզեան և Որդիք:
5. Այլի Տիկին Նեկտար Գարակէօզեան:
6. Տիկին Աղաւնի Յ. Գարակէօզեան:
7. Յակոբ էֆ. Յ. Յակոբեան:
8. Տիկին Էֆտիկ Պատմաճեան (հանգուցելոյն քոյրը):
9. Թաղական Խորհուրդ Մայր-Եկեղեցւոյ:
10. Թաղական Խորհուրդ Բերայի:
11. Վշտակիր Սանուհիք Գալֆահան Որբանոցի:

12. Աղքատախնամ Ընկ. Գումգարուի շորից թաղից:

13. Աղքատախնամ Բերայի:

14. Տիկին Աննիկ Գ. Էսայեան և Որդիք:

15. Տէր և Տիկին Տքդ. Գ. Դաւիթեան:

16. Տէր և Տիկին Յակոբ էֆ, Էսայեան:

17. Անտոն Վահան Պէյ Կէօշեան:

18. Արշակ պէյ Սուլուստեան:

19. Պ. է. Սապունճաքի, Էսյլք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ ազգային Մամուլն ներկայացուցիչներէն և հանրային բարեպաշտ գգացմանց թարգմաններէն մին, Գարակէօզեան բարեյիշատակ Տիկն. Էրմինէի հանդիսաւոր յուզարկաւորութեան նկարագիրն արձանագրելով իւր վերապահեալ էջերուն մէջ, գէթ մասամբ մը կատարած կը համարի՝ ազգային բարերարուհւոյ մը յոյժ ողբալի մահուան և անոր օրհնելի յիշատակին ի պատիւ՝ ամէն ճշմարիտ Հայու և ամէն ճշմարիտ քրիստոնէի համար պատկանաւոր վերջին տխուր յարգանաց պառնայն պարաքը: Արդէն հանգուցեալ Բարեպաշտուհւոյն դադարին յուզարկաւոր թափօրն իր պատկառելի ու նշանակելի ներկայութեամբ կ'ապացուցանէր՝ թէ Գարակէօզեան Գրիգոր էֆէնտիի մեծ քրոջ՝ Տիկին Էրմինէի՝ մահը ո՛չ միայն ազգային՝ այլ և համազգային սգոյ զէմքն ունէր Պաշտոյ համար. և միանգամայն կը հաւաստէր թէ Գարակէօզեան Գերդաստանը որքան համակրելի և հաճելի հանդիսացած է ազգայնոց և օտարազգեաց, որոց պաշտօնական թէ անպաշտօն, աշխարհական թէ կրօնական ամէն դասու ներկայացուցիչներ՝ ժողովարդի մը չափ հոծ ու խուռն բաղմաթեամբ մը յուզարկաւոր կը քողեր անոր ընտանեաց Բամրիշի մը Դադարին հետեւին:

Արդէն Գարակէօզեան գերդաստանը Ազգին և Պետութեան Բարձրագոյն Պատուոյն և Մեծարանքին արժանացած, Թուրքիոյ և Եւրոպայի առևտրական հրապարակաց ծանօթ առաջնակարգ վաճառականաց Ոստան մը լինելու չափ համբաւաւոր է: Երկրին ու Ազգին ամէն կարգի հանրաշահ Հաստատութեանց հանդիսացած է, հնար եղածին չափ, սատար. և անոնց ամէնուն օճան ընծայած. Գարակէօզեան Բարեյիշատակ Բարսեղ և Տիգրան էֆէնտիք իրենց հանրածանօթ կտակներով, նոյնպէս և Գարակէօզ-

եան լուսահոգի և մեծանուն Կարապետ Էֆէնտին Թուրքիոյ և Եւրոպայի առևտրական ծանց և սեզանաւորական Հրապարակաց ծանօթագոյն յողանակի դէմքով և Ազգ. Վարչութեան ամէն շրջանակաց մէջ ստացած Կարեւորագոյն գիրքովն ու յիշատակելի և ընդօրինակելի գերերով, ինչպէս և հանգուցեալ Բարերարոյն Յովսէփ Էֆէնտին յետոյ այսօր Գարակէօղեան Գրիգոր Էֆէնտին իր անտեսագիտական տաղանդով, իր վաճառականական վարկովն ու կարով: Վերջապէս, Գարակէօղեան գերդաստանի մէն մի անգամբ, թէ՛ ներաշխարհ և թէ՛ տարաշխարհ, վարած պատուաւոր կեանքով և արդիւնաւոր գործունէութեամբ, համազգային համարման ու համակրանաց հաւատարմքին արժանացած են:

(Շար.)

ԴՈՀԱՐԱՆԱԿԱՆ ԱՂՕԹԻ

Երէկ առաւօտ Մայր-եկեղեցւոյ Տաճարին մէջ հանդիսապէս կատարուեցաւ Նորին Կայսերական Վեհափառութեան Օգոստափառ Սուլթան Համիտ Բ. Խան Ղազիի Խննդեան 58րդ Տարեգարձի առթիւ գոհաբանական մաղթանքը, ի ներկայութեան պետական և ազգային ծանօթ անձնաւորութեանց և խուռն բազմութեան ժողովրդեան: Տաճարը՝ համակ լուսազարդուած էր: Ս. Պատրիարքը՝ ծանրագին շուրջառ առած յսո՞րեան եկաւ՝ շուրջն ունենալով Գեր. Տ. Բարթողիմէոս Արքեպիսկոպոս Չամչեան, Գեր. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուքիասեան, Գեր. Տ. Գրիգորիոս Եպիսկ. Ալէաթեան, Գեր. Տ. Հմայեակ Եպիսկ. Կոպոս Դիմաքսեան, Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան, Տ. Գաբրիէլ Եպիսկ. Ճէվահիրճեան, Տ. Մկրտիչ Արքեպս. Վեհապետեան, Տ. Սահակ Ծ. վրդ. Բազրեւանդեան, Տ. Արիստակէս Ծ. վրդպ. Վանքեան, Տ. Դնէլ Ծ. վրդ. Գալէմքեարեան, Տ. Վահան Ծ. վրդ. Յակոբեան, Տ. Վրդանէս Ծ. վրդ. Բապուճեան, Տ. Եղրաս վրդ. Սաչլեան, Տ. Վահրիճ վրդ. Շահլամեան, և այլ եկեղեցականներ:

Ս. Պատրիարքը այս առթիւ գեղեցիկ բանախօսութիւն մ'արտասանեց, Վեհ. Սուլթանին արեւսաւթեանը համար սրտադին բարեմաղթութիւններ ընելով, ներկայից կողմէ՝ «ամէն»ներով պատասխանուեցաւ,

Յետոյ Ս. Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Վսեմ. Ֆրէնկեան Աբրահամ Էֆէնտիի և Ա. գործակատար Տէր-Ներսէսեան Տիգրան Էֆէնտիի, Կայսերական Պալատ գնաց, և շնորհաւորական ուղերձ մը մատուցց յոսո Կայսերական Բարձր Գահոյից:

Վեհ. Սուլթանը բարեհաճած է Առաջին կարգի Ազամանդակուռ Մէճիտիէ պատուանշան շնորհել Բարձր. Յարութիւն փաշա Տատեանի, ի վարձատրութիւն իւր բարւոք ծառայութեանց:

Նոյնպէս, Քաղաքական Ժողովոյ անդամ Վսեմ Գրիգոր Էֆ. Խտրեանի Պալայի աստիճան:

«Հանրագիտակ» այս առթիւ կը փութայ իր սրտադին խնդակցութիւնները յայտնել Կայս. այս Բարձր գնահատութեան համար:

Աղեքսանդրիայէն հետեւեալը կը գրեն մեզ.

Եգիպտոսի առաջնորդական տեղապահ նորապսակ Տ. Յակոբ Աշոտ Եպիսկ. նոյմբ. 29ի կիրակի օրը քաղաքս ժամանեց, ուր եկեղեցական դասէն ու տեղիս երեւելի ազգայիններու կողմէ գիմաւորուելով, Ս. Պօղոս Պետրոս եկեղեցին առաջնորդուեցաւ: Նորապսակ եպիսկոպոսը ի ներկայութեան երկսեռ հետաքրքիր ժողովրդեան, բարեմաղթութիւններ ըրաւ և իր եպիսկոպոսական անդրանիկ օրհնութիւնները սուաւ բարեպաշտ ժողովրդեան:

Յետոյ Առաջնորդարան ելլելով, ներկաներու կողմէ մեծարանքներ ու շնոր-

հաւորութիւններ մատուցուեցան նորին Գերապատուութեան :

Նորապօպ Աշոտ եպիսկոպոս եկեղեցական ծանօթ դէմք մըն է . Պոլսոյ մէջ լաւ քարոզչի մը ու բանիբուն ուսուցչի մը համբաւը թողած է : Հաւատարի աղբիւրէ կ'իմանանք թէ եգիպտոսի օգգայիները շատ գոհ են նորին Գերապատուութեան բարւոք պաշտօնավարութենէն . այս պերճախօս գոհունակութիւնը և իր եպիսկոպոսացումը ինքնին կուգան նշանակալից հերքում մը առաջ այն ամէն չարամիտ քննադատութեանց , որոնք նպատակ ունին պղծտիկցնել արժանիքը Աշոտ Սրբազանին որ ամէն կերպով կ'աշխատի իր հօտին բարոյական ու նիւթական զորագոյման :

— Պոլսոյ վարժարաններու կրթական Տեսուչ Փաշազաչեան Յովնան էֆ. ի քեռայր Պրուսացի Իփիկիճեան Յովհաննէս էֆ.՝ վաճառական ի Կ. Պոլիս՝ եգիպտոս ուղեւորելու միջոցին իր հոգին աւանդեր է Աղէքսանդրիայի մէջ : Տեղին հայ դպրոցականութիւնը յուզարկաւորութեան հանգէսին ներկայ գտնուեցաւ : Այս ցաւալի մահուան առթիւ Հանրագիտակ կը փութայ իր ցաւակցութիւնները յայտնել հանգուցեալին վշտակիր ընտանիքին ու պարագաներուն :

Ն Շ Ա Ն Ա Ի Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Հինգշաբթի օրը՝ Ազգ. Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ պաշտօնական նշանախօսութիւնը՝ հանրածանօթ վաճառական եւ պատուաւոր Սեղանաւոր (պանքէր) Ազնուաշուք Խօրասանճեան կարապետ էֆէնտիի (Անդրանիկ որդի բարեխիշատակ Խօրասանճեան Ալիքսան էֆէնտիի) ընդ Համեստափայլ Օրիորդ Էլիզա Պ. Աստարճեանի՝ նաղեւաշուք Գոտեր հանգուցեալ Աստարճեան Պօղոս էֆէնտիի :

Երկուշաբթի օրը՝ ի Բերա, Ամուսնական արարողութիւնը պիտի կատարուի, կնքահայրութեամբ յայտնի վաճառական Ազնուաշուք կարապետ էֆ. Պասմաճեանի (քեռայր փեսացուն) :

Հանրագիտակ՝ իր սրտագին խնդակցութիւնները կը յայտնէ Խօրասանճեան եւ Աստարճեան նահապետական ընտանեաց սոյն բարեգէպ խնամութեան առթիւ :

Երկուշաբթի օրը՝ Դեկտ. 14, տեղի ունեցաւ Ազգ. Պատրիարքարանի հինաւուրց գործակատար Ազն. Յարութիւն էֆ. Գասպարեանի դատեր՝ Օրիորդ Արաքի Գասպարեանի ամուսնութիւնը ընդ Մարտում էֆ. Գաղազեանի, կրնքահայրութեամբ ճիզմէճեան Նշան էֆէնտիի եւ նախագահութեամբ Գեր. Տ. Մէորովայ Արքեպիսկոպոս Սուքիասեանի, որ շուրջն ունէր Տ. Եզնիկ եպիսկոպոս Ապահունի եւ Տ. Գէորգ եպիսկոպոս Երեցեան, Մայր-եկեղեցւոյ քահանայից և դպրաց դասերը :

Ձեռնադրութիւնը կատարեց Մայր-եկեղեցւոյ Արք. Տ. Կարապետ քահանայ Ստեփաննոսեան :

Մեր խնդակցութիւններն կը յայտնենք Յարութիւն էֆէնտի Գասպարեանի եւ երկուց նորապսակ Ամուլից :

ԳՐԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ-ՕՐԱՑՈՅՑ

1899 ՏԱՐԻՈՅ

Հրատարակուած է 2. Թորոսեան էֆ. ի հեղինակած Գրպանի Յուշատետր-Օրացոյցը, որ բաց ի պարզ Օրացոյցէ, իւ. մէջ կը պարունակէ կարգ մը օգտակար գիտելիքներ, առօրեայ կեանքի մէջ անմիջական պէտքերու գահացում տալու ամէն կարգի դործի տէր մարդոց համար :

Կը գտնուի Կալաթա վրայ և Ընկ. թղթավաճառանոցը, եւ Պոլիս հայ գը-

բաժնաճանդերուն քով. ինչպէս իր կեդրոնատեղին վախճէ խան: Նոյնպէս եւ Հանրագիտակի Խմբագրատունը:

Գին ընտիր լաթակազմ 2 ու կէս զրշ. — նոյնը ոսկեզօծ ճղտանով, 5 զրշ. ու կաշեկազմ ճղտանով 7 ու կէս զրշ. — նոյնը ընտիր թուղթով 12 ու կէս զրշ. — փղոսկրէ կողքով 20 իւահեկան. — շատ գնովներու մեծ զեղջ. — Նախորդ տարիներունը կը ծախուի հատը 40 փր.:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ա. Յ. ՊՅՅԱՃԵԱՆ

Ազգին հմուտ եւ բազմօգուտ ուսուցիչներէն Տիար Ա. Յ. Պոյաճեան՝ մանկավարժական սկզբանց համեմատ՝ մէթոտաւոր նոր ոճով հրատարակած է պատկերազարդ ընթերցարան մը:

Սոյն ՆՈՐ անունով ընթերցարանը՝ ըստ յայտարարութեան Բօրինողին, պիտի չինէ ու զօրացնէ տղայաց բարուց բոյսը (նկարագիր), գեղեցիկ տպագրութեամբ, ընտիր թղթով եւ մաքուր կաղմով:

Կը յանձնարարենք Ազգային բոլոր դպրոցաց եւ ուսուցչաց կամ ընթերցողաց գնել հատ մը եւ գնահատել դասական սոյն գործը, որուն պարտաւիրութիւն իրեն յատուկ շահեկանութիւնը:

ԼՈՒԹՈՒՄՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ

Ժէ խնդիրը լուծած են

Պրնք. Բերովսէ Կ. Իււլպէնկեան՝ Աֆիսն-Գարահիսարէն. — Եղուարդ Տ. Պոյաճեան՝ Արապկիրէն, եւ Արշակ Մ. Խաչատուրեան՝ Պոլիս:

ԺԸ խնդիրը՝ որով հաստատածակողմի մը խորհիւնը եւ բարձրութիւնը կը պահանջուէր,

Լուծեր են,

Պ. Երուանդ Մ. Տէյիւճեան, աշակերտ վիճենական վարժարանին Ի Բանկաթի:

Օր. Հրանդ ինճէեան, աշակերտուհի աղգ. վարժարանին Մագրիդիւղի:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Էրզրում. — Գործակալութիւն. — Ստացած ենք նամակնիդ, շնորհակալութիւն, եւ բաժանորդ արձանագրած ենք վայելչապարգուծեան Բաժնին:

Կեսարիա. — Կ. Մ. Ապահունի. — Նոյնպէս:

Պոլիս. — Տքդ. Մ. Բ. Իւթիւճեան. — Նոյնպէս:

Գուշ-Ատա. — Գործակալութիւն. — Մասնաւոր նամակ գրուեցաւ:

Վենետիկ. — Պատ. Խմբագրութիւն Բազմակէպի. — Մասնաւոր նամակ գրուեցաւ Աւստրիոյ բօթով:

Հատըմ. Բէյ. — Պ. Տ. — Նամակնիդ ստացած ենք. պէտք եղած տեղեկութիւնները կը տրուին:

Շատեր այնպէս կը հաւատան թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃՇՄԱՐԻՏ եւ ԱՆԽԱՐԴԱԽ Մօռիւ ձկան իւղ չի դրուել իր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թու գիմեն Լ. Արաւանեան եւ Ս. Էմիրզէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրնտգլեան Խանի տակ Թիւ Յ, ուր պիտի գտնեն ուղղակի նորվէկիայէն բերել տրուած ամենաբնական ձկան իւղի տեսակներ. Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ դիւրամատչելի գիներով:

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'առարարէ մի միայն Տնօրէն-Խմբագրատն Ղ. ԲՈՂԱՏ, որու գիմել պէտք է, առանց բացառութեան, թերթիս վերաբերեալ ամէն գործառնութեանց համար:

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՁՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԻ

Ճշմարիտ հաճոյքն այն է որ, ախորժելի ժամանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հաճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զարգացած ազգերը ամենէն աւելի թիցին նախապատուութիւն կուտան, անոր համար որ, այս թանկագին ըմպելիին ամենածանր յոգնութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը վերականգնու: Զմեռը արիւնը տաքցնելով, մարահինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ ամառն ալ զովութիւն ընծայելով. շատ մը հիւանդութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատմարտուած գաւաթ մը թէյը, նոյնչափ մսիջութի հաւասար անունդ կը պարունակէ և իր անբաղդատելի ածխութեամբ կատարեալ նախախնամութիւն մըն է մարդկութեան համար: Սակայն աւա՛ղ որ թից անուամբ ծախուածներու մեծագոյն մասը խարդախուած ըլլալով, գուրկ են այս առաւելութիւններէն և զանոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք որ կը փափաքին ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ և միւսնոյն ատեն ԱԺԱՆ ԹԵՅ խմել, պէտք է ԿՀԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑԹԵՅԻՐը գործածեն. ուշադրութեամբ փրնտուելով անոնց անունն ու մասնաւոր տուրիքները վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճառատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ, արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ արտածելուն և ահագին ապրանքներ սպառելուն շնորհիւ, միշտ անխարդախ թէյ կը ծախէ ԱՆՄՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրոնատեղին է Կ. Պօլիս, ձէլալ Պէյ խտն, Թիւ 10:

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ Կը ծանուցանէ թէ Մանկավարժական Գերականութեան Գ. մասը տպագրութեան յանձնուած է:

Մայիսի 12-ը Սիսիւթի Գաղղիերէն մասի ԺԱ. տետրը հրատարակուած է և բաժանորդագրութիւնը փակուած է: Գին 12 տետրերու 25 շրուշ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոքոյ եւ Գաւառաց համար	
Հանրագիտակ տարեկան	50 շր.
» վայելչազարդութեան բաժինով	80 »
Հանրագիտակ միայն վայելչազարդութեան բաժինն	60 »
Հանրագիտակ վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	110 »
Արտասահմանի համար	
Հանրագիտակ տարեկան	15 ֆր.
» վայելչազարդութեան բաժինով	20 »
Հանրագիտակ միայն վայելչազարդութեան բաժին	16 »
Հանրագիտակ վայելչազարդութեան բաժին գունաւոր եւ մեծադիր 36 պատկերներով	25 »

ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՎԱՅԵԼՁԱԶԱՐԴՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆԻՆ

Ղ. ԲՈԼԱՏ

Խմբագրապետ Հանրագիտակ Հանդեսի

Թիւ 19 էսկի-Չապիէ

Կ. Պոլիս

Տէր.

Գնահատելով Ձեր հանրօգուտ ձեռնարկը, հաճեցէք զիս բաժանորդ արձանագրել թերթիդ վայելչազարդութեան բաժնին և

Ստորագրութիւն
(Ընթերցելի)

1898

Բնակութեան տեղ

Հասցէ

Մ Ե Ր Ն Ա Ս Ց Է Ն

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետևեալ հասցէին, ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Է ՄԻՋՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն գանգատ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

درعليه ده بفتح قوسنده اسكي ضبطه ده
صوباجي پارسغ افدينك ۱۹ نومرولى دكاننده
«مجموعه علوم» غزتهسى سر محررى (بولاد) افدى»

Դ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul

Մ Ե Ր Մ Թ Ե Ր Ա Ն Ո Ց Դ Ե Ղ Օ Ր Ե Ի Ց

Լ. ԱՐՈՒԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՉԻ

Կ. ՊՈԼԻՍ ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վիրաբուժական գործիքներ, Անդղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, գօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ վթերք մը, յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրչի: Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախողներին գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը շրջեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Արաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Էրզնում — Եղ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճանեան
Իզմիս — Արրահամ էֆ. Կ. Կտաւճեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէշիշեան
Թրեպոնի. — Գալուստ էֆ. Գըլըճեան
Սինոպ. — Յ. էֆ. Պետրոսեան

Կարմենակ էֆ. Սօմունճեան
Յարմ. Տ. Յովհաննէս քահանայ
Պարճապետեան
Մանչիք — Յակոբ էֆ. Բոլատեան
Պանիքում — Արմենակ էֆ. Ս. Մսերեան
Արգազ — Յ. էֆ. Գարակէօզեան
Տրապզուն. — Սահակ էֆ. Էթմէքճեան
Կելիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Մանիսա. — Մկրտիչ էֆ. Էրկանեան
Աֆիոն-Գարա-Հիսար. — Արտաշէն էֆ. Հալէպեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մազրի-Գիւղ, Պողոս էֆ. Ազնաւորեանի խանութը,
Գատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուքճեան Դեղարանը,
Բերա, Դեմ փողոց Դառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: